

Pliny 14

112-124

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՂԵՐ

Գ ր ւ յ

ԱԶՍՏ ԿԻՂԻԿԵԱՆ

ԲԱՆՊԱՏԵՂԾ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ՝

Տարիքս Տասն և ութը տարեկան :

Չեր մէջ առէք մօռյլ ընկեր , բարեկամ :

—

Գրուածքս հիանալի իսկ ևս տխար :



1913

Տպագրութիւն ՊԱՀԱԿ-ի
ՓՐՈՎԻՏԵՆՍ

891.99-1

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՂԵՐ

Գ ր ք ց

ԱԶՍԱ ԿԻԼԻԿԵԱՆ



ՈՒՍՏՐ

1913

3839

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ՝

Տարիքս Տասն և ութը տարեկան :

Զեր մէջ առէք մռայլ ընկեր , բարեկամ :

—

Գրուածքս հիանալի իսկ ես տիպար :




(6230.12)



124-2015

18124





Ս.Ս.Ս. ԿԻԼԻԿԵԱՆ

ՅԵՈՒԼԵԱՆ



1907 արիւնոտ թուականին, թուրք բռնակալութեան ծանր շղթաներու տակ տանջուող և Սուլթան Համիտի ահ ու սարսափի կատաղութեան օրերուն թշուառութեան մատնուող՝ Հայկո հարկադրուեցայ անխուսափելիօրէն՝ բաժնուիլ պապենական նուիրական ժառանգէս, որ հիմա ամառի է դարձած։ Տասներկու տարեկան ծաղիկ հասակիս՝ զիս աճապարանքով մը ճամբու դրին ու իբր տքտրական վտարեցին զիս դէպի Ադրանտեանի այս անհիւրընկալ և վտարանդի ափերը։

Իմ մէջս զգալով այս գրութիւններու մայրը եղող զգացումներն ու յոյզերը՝ չուզեցի խեղդել զանոնք, հետեւաբար գրիչիս ծայրէն դուրս տուի իմ պատանեկական 16—18 տարիներու մէջ, նուիրելու Քէսրիկի դպրոցին որ ինքնին մռայլ պատմութիւն մը ունի։ Հոն սովորե-

ցայ ես իմ ա, բ, գ-ը, ու եկեղեցւոյ մեջա-
նուշ, ողբերգութեան նարականները ու անոր վերջի-
շումը իմ մաքիւ մէջ կ'արթնցնէ տխուր յիշա-
տակը պապենական օճախիս՝ ուր ծնած եմ ես,
Յունվար 6, 1894 թուականին:

Ուսար, 1912

Ա.ՉԱՏ ԿԻԼԻԿԵԱՆ



ԻՄ ԲՇՂԴՍ

Համի'տ ծագեց մութ սրտիս մէջ քու խօսքեր,
Վառեալ կ'ուզես զիս Հայրենի Յճախէս:
Մայր կ'երթամ օտար երկիր սև բաղդս ողբալու,
Ես թափառական եղած եմ կեանքիս օրերուն:
Մնաք բարեաւ ընկերներ ու բարեկամներ,
Այ ես կ'երթամ Հեռու, Հեռու երկիրներ:
Խեղճ ու կրակ, տխուր դէմքով՝
Մի լար մայր իմ սիրական,
Թէ որ պիտ լաս Հեռու ինձմէ,
Չեմ գիմանար տեսնել արցունքդ մայրական:
Հանգարտ սրտով, ուրախ դէմքով առն դարձիր
Հոգ մի ըներ, սեպէ՛ թէ ալ չկամ ես:
Զաւակ եմ անբաղդ, անարե,
Հեռու Հայրենի հողերէ, ձորերէ միշտ Հեռու:
Ցաւերուս վրայ կուլամ ես օրն ի բուն,
Տէր մեղքացիր իմ ցաւերուս վրայ:
Ա՛հ ի՞նչ ընեմ, ո՞ւր գրեմ որ զիս ընդունէ երկիր,
Հէ՛յ վախ դուն պէպաղդ Ա.ՉԱՏ ԿԻԼԻԿԵԱՆ:



ԳԼԽՆԵՆ ԵՌԱՋԻ ՕՐԸ

Յորեկն արեւ, գիշերն աստղեր կը փայլին,
Գարնան դալար շրթներն ահա կը բացուին:
Տո՛ւր կեանք երկա՛ր, շատ դարուներ տեսնելու,
Տուր ինձ, աղաւնիի երգը երգելու:

Յաւ մ' ունիմ ես պատմելու կեանքիս օրերուն
Հեռացուր ցաւերս, յանձնէ հովերուն,
Լալնաճաւալ ովկիանոսն ալ կտրել անցնելու,
Բեր դարնան բացուած ծաղիկը տեսնելու:



ԵՌ ԹՈՉՈՒՆ

Ձմեռուան հովն փչէ ուժգին:
Սրբեթաց նաւուն փողն հնչէ ծովուն վրայ,
Թող ասէ՛ք, սա իրիկունն ալ կ'երթայ շուտ:
Շատ դացիներ թէ քիչ, նաւը ինկաւ:
Ոչ մարդ կայ, ոչ ձայն, ալիքն է մեզ պատած,
Ես կը հայէի դէպի երկինք...
Ճվճվանքդ ես սիրեմ քու անուշ,
Ձայն սուր թռչուն, գէթ ձայնովդ ես մեռնիմ:
Թռչո՛ւն ան'ս, նաւը ինկաւ, մեզ օդնող չկայ,
Ի՛նչ մնաս բարով դուն քաղցրիկ թռչուն,
Յիշէ դուն զիս բարձր երկինքէն...

Լուրեր տար դուն սիրուն թռչուն,
Հեռու Հայերուն պատմէ իմ ցաւեր
Թէ ես եղայ խեղդամահ...:



ԵՐԱՌԵԱԿՆ ՀԵՒՏԻՐ

Վշտիս մոխիրին վրայ ձիթենադոյն,
Ո՛վ իմ հաւատքս աքսորական,
Եկո՛ւր քու մխիթարական խօսքերդ ըսէ:

Եւ դուն ո՛վ հաւատքս աքսորական,
Գթութեան քնարի մը նման,
Իմ լքումիս անապատին մէջ դառնաչունչ,
Սփոփանքիդ եկուր երգը հնչեցուր:

Բեղի համար կ'երգեմ հաւատքս աքսորական,
Նուիրումի ինչ տաճարներ քանդեմ ես,
Դու լեռնական կաղաւներու մրմունջէն,
Հրաշափող քանի երգեր ժողուեցիր:

Ամենաբարի և օրհնեալ հաւատք,
Դարձի՛ր աքսորաւայրէդ
Ու քեզի նուէր տամ:



ԵՆԻՆՈՒՐ

Նստած եմ մայր նկարիդ քով
 Ու կը կարգամ գրուածքդ անուշ,
 Անուշիկ մայր, «Խուրպան ըլլիմ քեզի»
 Բաւ է ալ, հերիք թերթեր գրել տաս :
 Նկարովդ ամեն բան ես տեսայ,
 Դէմքդ թառամած, աչքերդ դեղնած,
 Մարմինդ հալած, վիրաւոր ե նիհար :
 Մի՛ տանջեր հոգիս, մայր իմ թանկագին,
 Մի նեղեր կեանքդ ինձ համար,
 Խեղճ ու կրակ ձեռքէ ոտքէ ինկած ես :
 Պատկերդ կ'երեւնայ աչքիս առջև,
 Սիրտս ու հոգիս կըլլան լեզապատառ :
 Իմ ցաւս շատ է, վիրտս եաման,
 Կարօտցեր եմ մայր, միջոց չունիմ որ դամ
 տեսնեմ :

Մէկդի նկարս, մէկդի շուներուն,
 Անիծէ՛, անիծէ՛, ուր որ ալ ըլլամ
 Անիծէ՛, մինչև կեանքիս մահ :
 Ծունկի եկուր, անուշ մայր ծունկի եկուր ու
 անիծէ՛,
 Խաչակնքէ՛, անիծէ՛, խաչակնքէ՛ անիծէ՛,
 Անիծէ՛, անիծէ՛, զի ես ձեռքս զործեցի :



ՀԱՅ ՏՂԱՅ

Երգէ՛, Հայ տղայ, երգէ :
 Զմեռին եւ մահին
 Մանաւանդ,
 Պատգամ մենք բերինք :

Զա՛րկ Հայ տղայ
 Սրտիդ եւ կուրծքիդ,
 Եւ կնքիր Հայաստանը,
 Զեռքովդ գարնան :



ԵՂՅԻՒՐ

Լոյսով լեցուած
 Ճառագայթին մէջ ալւոյն,
 Առաւօտէն մինչ գիշեր
 Յատքեւով եւ ցայտեւով :

Զիւնի ճերմակ
 Լոյսին մէջ լուսնին՝
 Փչած պահուն հովին
 Կը տատանի ծաղկի պէս :

Աստղիկի լոյսին մէջ՝
 Փրփուրին մէջ խուժեւով,

Կէս գիշերին, երջանիկ՝
Եւ երջանիկ օրերով :

Շարժումի մէջ միշտ
Բերկրանքոտ ու զուարթ
Մաքցցելով դէպ երկինք
Անխոնջ օրէն տակաւին :

Բոլոր օգերուն զուարթ՝
Դեռ զուարթ երևոյթով,
Դէպի վա՛ր, կամ դէպի վե՛ր
Հանգիստ կը վերդովես :

Բնութիւնով մը լիցուն
Ոչինչ կրնայ նուաճել,
Փողփողադին ալիք վայրկեանի
Նոյնն յաւէտ, փողփողադին :

Անհատնում ցանկութեամբ
Եւ դո՛ւնութեամբ անհատնում,
Խաւա՞ր է թէ լոյս
Քու նշանաբանդ :

Երջանիկ ազրի՛ւր
Թո՛ղ իմ սիրտս ըլլար
Փողփողադին, թարմ, կայուն
Միշտ դէպի վեր քեզի պէս :

Թարգ .



ԳՈՒՑԻ

Տասը տարի եղաւ անցար դացիր հեռու երկիր,
Ո՛վ հեռաւոր պանդուխտ զաւակս, ո՛ւր մնացիր :
Նստեր եմ պատու հանիդ դէմ, տանդ ամայի,
Սպասումով մը քեզի, անհամբեր . . . :

Յուսահատ եմ դաւակս,
Չեմ կրնար դիմանալ այս վիճակիս աղետարժ :
Դարձի՛ր զաւակս, դարձի՛ր Հայրենիքդ անուշ,
Եւ մօրդ անբարձկամ ու մինակ :

Կեանքս ես դո՛ւն չոյսս մինակ
Ու լոյսը աչքիս, և ահէն ինչ ինձ համար . . . :

Վերջալոյսի ստուերներն են հիմա հովանաւո-
րողը զիս,
Այսահարներ զիս պաշարեն գիշերին մէջ խաւարա-
չին,
Անողոք մահն իր ցուրտ շունչը կը խրկէ վաղոր-
դայնի ցողերուն տեղ . . . :

Օր մը, ա՛հ, օր մը, պիտի խաւարի արեւն աշ-
քերուս,

Կը սոսկամ ես, կը սոսկամ, անո՛ւշս,
Երբ մերթ մտածում մը անապոյն ու դաժան,
Խուժումով մը, անտեղիտալի ու դժնէ,
Գանկիս մէջքէն կ'ըսէ ինձի,
«Չաւակդ չտեսած, ԳՈՒՑԻ, մեռնիս պիտի դո՛ւն :»



ՄՕՐՍ ՅԵՒՐ

Ղարիբ դաւակս քեզ երգելով կը կանչեմ ,
 Պատէն կախուած նկարիդ ի տես կ'արտասուեմ ,
 Անցան ամեն բան . . . լսկ դուն մնացիր ,
 Նկարդ ձեռքս է , երկար հասակ մը ունիս :
 Ի՞նչ աղուոր դէմք մը ունիս նայուածքդ անուշ
 Խարտեաչ մաղերդ թանկագին :
 Աչքիս արցունքները զիս խեղդեցին ,
 Քեզ մեծցուցի այդ տարիքիդ հասցուցի
 Ոչ թէ օտար երկիր զրկելու . . . :
 Եկո՛ւր հոգիս , դոնէ ինծի խղճա՛յ ,
 Հիւանդ նստած եմ պատկերիդ մօտ :
 Ո՞ւր ես դաւակս , իմ ձայնս չե՞ս լսեր ,
 Վէրքս չատ է Հայկս , մի թողուր զիս անտէր :
 Ա՛խ , ձեռքս հասնէիր զաւտ'կս , քեզի ըսէի :
 Թռչո՛ւն չուտ եկուր , չուտ եկուր դնա ,
 Հեռու իմ ղարիբ Հայկ զաւկիս
 Պատմէ ցաւերս զորս դուն տեսար :



ՏԻՐԱՄԵՅԻ

Մարիամ , Մարիամ , մաքուր , սուրբ և անա-
 րատ ,
 Քուկին մէջ բազուկ , տէր իշխան պարծանք ,
 Քուկին մէջ դուժ , հիանալի պատմուածք :

Մարիամ , Մարիամ , քաղցր և անուշիկ ,
 Քերովընք անդադար երկրպագեն քեզ :
 Սէր ու երկիւղ կարսուն ատաջ քեզ :

Մարիամ , Մարիամ , Քրիստոս մաքուր
 աղաւնի ,
 Պայծառ լոյս մարգարտական , սէր անհուն ,
 Աստղանիչ աչքի , ո՛վ լոյս մարգարէ :

Մարիամ , Մարիամ , քաղցր ու անուշիկ ,
 Զարնել , լռեցնել կամ նուազ ճոճել ,
 Տառապանք , ցաւ , վիշտ ամոքել :

Մարիամ , Մարիամ , սուրբ և անարատ
 Փայլէ ինձ հետ , նուրբ հոգի շողուն ,
 Երկինք քեզ թափէ բոլորակ վայլուն :



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍ ԵՆ
ՀԵՏԵՒԱԼ ԳՐԲԵՐԸ

1. ՊԱՆՏՈՒԽՏԻ ՆԱՄԱԿԱՆԻ
2. ԱՆԻՄ ԵԱՐՍ
3. ՄԵՐ ՍՐԲԱՎԱՅՐԵՐՆ ՈՒ ԿՐԾՆՔԸ
4. ՎՐԷԺԸ (Թառեղգութիւն)
5. ՊԱՆՏՈՒԽԴ ՀԱՅՐԸ (Կառակեղգութիւն)

ԳԻՆ 15 ՍԷՆԹ

10-48

Հ Ազգային գրադարան



NL0336236

ՀՀ Ազգային գրադարան



NL0336235

ՀՀ Ազգային գրադարան



NL0336234

ՀՀ Ազգային գրադարան



NL0336233

ՀՀ Ազգային գրադարան



NL0336232

ՀՀ Ազգային գրադարան



NL0336231



NL0652294



NL0336230

ՀՀ Ազգային գրադարան



NL0336229

ՀՀ Ազգային գրադարան



NL0336228

ՀՀ Ազգային գրադարան



NL0336227

ՀՀ Ազգային գրադարան



NL0336226

ՀՀ Ազգային գրադարան



NL0336225

